ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(43), 17 մարտի, 2022թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Սիրելի՛ կանայք և աղջիկներ,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի և իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ՝ մաղթելով առողջություն, խաղաղություն, սեր, անձնական և մասնագիտական հաջողություններ ու ձեռքբերումներ:

Բնության զարթոնքն ազդարարող գարնանը Ձեզ նվիրված տոն ունենալը, թերևս, պատահական չէ, քանզի Ձեր անսահման սիրո, տոկունության, ներքին ուժի և ամուր կամքի շնորհիվ է, որ ամուր են մնում հայ ընտանիքի հիմնասյուները:

Անգնահատելի է Ձեր ներդրումը նաև պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այսօր, առավել քան երբևէ, իրականություն է դարձել մասնագիտական բարձր գիտելիքներով ու պատրաստվածությամբ օժտված կնոջ ակտիվ դերակատարումը պետական և հանրային կյանքում, ինչի վառ ապացույցն է պետական կառավարման համակարգում, այդ թվում՝ ոստիկանությունում ծառայող կանանց թվի աճը:

Շնորհակալ եմ ամենօրյա աշխատանքում Ձեր անձնուրաց ջանքերի ու նվիրումի համար, ինչը նպաստում է մեր պետության առաջընթացին ու զարգացմանը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Pro bono» իրավաբանական կլինիկայում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր աշխատանքային չորեքշաբթի՝ ժամը 15: 00 –ից մինչև 17:00:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկա կարող է դիմել ցանկացած անձ՝ քաղաքացիաիրավական, քրեաիրավական, արդեն նաև վարչաիրավական հարցերով անվճար խորհրդատվություն ստանալու համար:

Խորհրդատվություն ստանալու համար կարող եք այցելել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի գրասենյակ՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 29, կամ հարցերն ուղղել legalclinic2021@gmail.com էլեկտրոնային հասցեով:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

* 2021 թվականի օպերատիվ-ծառայողական գործունեության ընթացքում բարձր ցուցանիշներ ապահովելու և ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու համար ՀՀ ոստիկանության պետի հրամանով պարգևատրվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի հատուկ պատրաստականության կրթաճյուղի ավագ դասախոս, ոստիկանության գնդապետ է. Մարտիրոսյանը՝ «Օրենքի պատվար» մեդալով, և Ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Ն. Վարյանը՝ պատվոգրով:

Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը հանձնեց պարգևները և շնորհավորելով ծառայողներին՝ նրանց մաղթեց նորանոր մասնագիտական բարձունքներ և մեծ հաջողություններ:

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Վերադառնալը մեր բառապաշարի այն բառերից է, որը կարծես նոր սկիզբ, նոր ուրախություն է հուշում, և ակամայից պարուրվում ես լավատեսությամբ, վաղվա օրն ավելի լավ ու լուսավոր տեսնելու հույսով:

Հայրենիքին պարտքը տված մեր տղաները զորացրվելուց հետո պետք է շարունակեն ուսումը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 1-ին կուրսում: Նրանք Արցախյան 44-օրյա պատերազմի թոհուբոհից փրկված երջանիկներից են, որոնք կիսամյակն սկսելուց առաջ որոշեցին այցելել Կրթահամալիրի Փառքի և խոնարհման լսարան ու ծաղիկներ խոնարհել պատերազմում զոհված իրենց կուրսընկերների հիշատակին: Պահը հուզիչ էր, լռությունը՝ խոսուն: Արցունքներն ապառաժի պես ծանրացել էին նրանց աչքերում, բայց պատերազմով անցած տղաներին կյանքն ավելի էր կոփել, ավելի հասունացրել, ուստի զսպելով իրենց ներսի հույզերը՝ զոհված ընկերների լուսանկարների առջև երդվեցին լավ սովորել, իսկ անհրաժեշտության դեպքում պատրաստ լինել՝ դարձյալ կանգնելու հայրենիքի պաշտպանության դիրքերում:

▶ 2

1 ◄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

* «Դինամո» մարզական-հասարակական կազմակերպությունում անցկացվեց արագ շախմատի ոստիկանության առաջնությունը, որը կայացավ ՀՀ ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնի և Երևանի շախմատի ֆեդերացիայի համատեղ ջանքերով: Առաջնությանը մասնակցում էր ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների և Արցախի ոստիկանության հավաքական 18 թիմ:

Թիմային պայքարում հաղթող ճանաչվեց ոստիկանության կրթահամալիրի հավաքական թիմը հետևյալ կազմով՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ազատ Բաբախանյան, քոլեջի ՄՖՊ ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության գնդապետ Ալբիկ Մինասյան, քոլեջի հասարակական առարկաների և հոգեբանության ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Արթուր Սարգսյան, Կրթահամալիրի թիմի ներկայացուցիչ՝ քոլեջի ՄՖՊ ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Էդգար Պողոսյան:

Երկրորդ և երրորդ տեղերն զբաղեցրին ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության և շտաբի հավաքական թիմերը:

Անհատական պայքարում լավագույնն էր ոստիկանության կրթահամալիրի ներկայացուցիչ Արթուր Սարգսյանը: Առաջնության հաղթողներն ու մրցանակակիրները պարգևատրվեցին դիպլոմներով, մեդալներով, հուշանվերներով և դրամական պարգևներով: Մրցանակները հանձնեցին Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Մխիթար Հայրապետյանը, ֆեդերացիայի նախագահության անդամ Արտակ Մանուկյանն ու ոստիկանության մարտական և ֆիզիկական պատրաստականության բաժնի պետ Արմեն Մկրտչյանը:

---

* Փետրվարի 16-ին տեղի ունեցավ Բելառուսի Հանրապետության Մոգիլևի ՆԳՆ ինստիտուտի կողմից կազմակերպված «Կուրսանտների գիտական փնտրտուք» անվանումը կրող միջազգային կոնֆերանս-գիտաժողովը, որին մասնակցում էին կուրսանտներ Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Մոլդովայի Հանրապետության համալսարաններից: Հայաստանի Հանրապետությունից մասնակցում էր ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի առկա անվճար 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Վարդան Եդիգարովը: Կոնֆերանսի սկզբում բացման խոսքով հանդես եկավ Մոգիլևի ինստիտուտի պրոռեկտոր, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վլադիմիր Բորիսենկոն, ով նշեց, որ կոնֆերանսին մասնակցության համար ներկայացվել էր 234 հայտ՝ համապատասխան զեկուցումներով, որոնցից ընտրված 9 լավագույններին հնարավորություն էր ընձեռվել հանդես գալ ելույթներով, որոնց շարքում էր նաև Կրթահամալիրի ներկայացուցիչը: Վարդան Եդիգարովը ներկայացրեց զեկույց՝ «Օտարերկրյա անձանց մասնակցությամբ դատավարության առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ» վերտառությամբ. գիտական ղեկավար՝ Կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս Լուսինե Թասալյան:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի սովորող Վարդան Եդիգարովի զեկույցն արժանացավ հատուկ ուշադրության: Ինչպես փաստեց կոնֆերանսի կազմակերպչական կոմիտեն, այն արծարծում էր ոլորտին վերաբերող առավել արդիական հիմնախնդիրներ և արժեքավոր դիտարկումներ:

ԳԱՐՆԱՆ ՄՈՒՏՔԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԵՐՈՎ

Չկա ավելի հեշտ բան, քան սովորական կնոջը բացառիկ կին դարձնելը: Բավական է սիրել նրան:

Մ.Ս. Սովաժոն

1975 թվականին ՄԱԿ-ը մարտի 8-ը հայտարարեց Կանանց միջազգային օր, որի նախաձեռնողը Կլարա Ցետկինն էր (1910թ. Կոպենհագեն): 1996 թվականից տոնը մեր երկրում չեղյալ է համարվել՝ փոխարինվելով Ապրիլի 7-ով, որը Մայրության և գեղեցկության տոնն է: Հայ կանայք մեկ օրով սահմանափակվել չցանկացան և մարտի 8-ը համարեցին իրենց տոնական միամսյակի սկիզբը: 2001 թվականին Մարտի 8-ը տոնացույցում վերականգնվեց, և մինչև Ապրիլի 7-ն ընկած ժամանակահատվածն ընդունված է համարել կանանց միամսյակ:

Գարնան ամենապայծառ տոներից է այս, քանի որ կանայք իրենց էությամբ գարուն և կյանք են: Տոնն ինքնին ծաղիկների, նվերների ու բարեմաղթանքների սպասում է:

Ասում են՝ կինն ու գարունը չեն տարբերվում միմյանցից, իսկ երբեմն նույնիսկ նույնանում են: Կինն ու գարունը միաձույլ են, որովհետև երկուսն էլ կախարդիչ են և արարող: Գարունը հենց կինն է՝ միշտ ծաղկող, իսկ կինն իր էությամբ գարուն է՝ հանելուկներով և անակնկալներով լի: Գարունը նոր կյանքի, զարթոնքի, վերածննդի սկիզբ է, հողից նոր գլուխը հանող և աշխարհին զարմանքով նայող ծաղիկ է, արևի ջերմ շողերը կլանող կանաչ է, թռչունների քաղցր ծլվլոց, և գարունն առանց կանանց հնարավոր չէ պատկերացնել: Այո՛, կինը նոր կյանք տվող, կյանքին նոր իմաստ հաղորդող էակ է: Կնոջը պետք է մեծարել, հարգել և սիրել միշտ՝ անկախ տոնից: Ծաղկառատ այս տոնը ևս մեկ անգամ առիթ է, որպեսզի տղամարդիկ վերագնահատեն և իմաստավորեն իրենց կողակիցներին, որպեսզի երեխաներն առավել հոգատար և ուշադիր լինեն իրենց մայրերի, քույրերի և տատիկների հանդեպ: Գեղեցիկ ավանդույթ է մեկ ամիս շարունակ կանանց մեծարելը, քնքուշ ու հաճելի խոսքեր ասելը, նրանց հոգատարությամբ շրջապատելը, քանզի նրանք արժանի են ամենագեղեցիկ խոսքերի ու ծաղիկների: Սակայն լավ գիտակցում ենք, որ նման հոգատարությունը չպետք է սահմանափակվի միայն մեկ ամսով: Հայ կանայք ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում տղամարդկանց կողքին են, նրանց նեցուկն ու հավատարիմ ուղեկիցն են: Չկան ոլորտներ, որտեղ հնարավոր է հաջողություններ գրանցել առանց կանանց գործուն մասնակցության: Գարունը սեր է և սիրո սպասում: Գարունը կին է, քույր ու մայր: Գարնան բոլոր գույներն ու հրապույրները կնոջ մեջ են: Բոլոր ժամանակներում արվեստագետներն իրենց ստեղծագործություններում գարունը նույնացրել են կնոջ, նրա հմայքի ու գեղեցկության հետ: Յուրաքանչյուրի գարունը յուրովի է գալիս, սակայն բոլոր գարունները միավորողը եթերային զգացումներն են ու սերը, սերն աշխարհի ու մարդկանց նկատմամբ: Գարունը լավ անակնկալների սրտատրոփ սպասման եղանակ է: Միայն գարուն բառից մարդու հոգին ջերմանում է, ծիծաղը՝ ծաղկում, հույսը՝ ծիածանվում, ներաշխարհը՝ փոթորկվում: Գարունը հոգու զարթոնք է՝ արարումների նուրբ լույսով լեցուն: Երբ հոգում գարուն կա, սիրտը բերնեբերան լիքն է, ինչ-որ բարի գործ է արվում, հաղթահարվում են անհնարին թվացող պատնեշները, սիրում են և ձգտում լինել սիրված...

Կինը երջանկության հրավեր է: Կնոջ հմայքը, բարությունը, խելքը, հոգու գեղեցկությունն ավելի են գեղեցկացնում և զորեղացնում նրան: Կինը պետք է միշտ ձգտի կատարելության և լինի օրինակելի: Իսկ կատարյալ դառնում է մայրանալով: Մայրացած կինը կարծես հաղորդակից է դառնում Աստծուն, նրանից զորավոր ուժ ստանում: Այո՛, մայրերն ամեն ինչ գեղեցկացնելու առանձնահատուկ ձիրք ունեն: «Մայրերի ափերի մեջ պետք է փնտրել ազգի փրկությունը»,- այսպես է մեծարել հայ մայրերին Գարեգին Նժդեհը:

Հայ մայրն իր նվիրումով ու պտղաբերությամբ, սիրով ու աշխատասիրությամբ ազգի շառավիղը շարունակողն է: Հայուհին պետք է դառնա ինչպես իր ընտանիքի, օջախի ամուր սյունը, այնպես էլ բոլորիս տան՝ մեր հայրենիքի հաստատուն հենասյունը:

Սիրելի՛ կանայք, Անահիտ աստվածուհու օրհնությամբ մաղթում եմ, որ արժանանաք մայրանալու և պտղաբերումի զգացումին, Նանե աստվածուհու օրհնությամբ զգաք տիեզերահաս ողջախոհության կատարելությունը, Աստղիկ աստվածուհու օրհնությամբ հասնեք մեծ սիրո և այդ սիրո ջերմությունը վայելելու քնքշանքին:

Շնորհավոր մեր տոնը, սիրելի՛ կանայք: Մայրե՛ր, քույրե՛ր, տատիկնե՛ր, միշտ եղե՛ք սիրված և գնահատված: Անսահման սեր ու երջանկություն Ձեզ:

Թող միայն պայծառ և գեղեցիկ գարունները թագավորեն Ձեր ջերմ հոգիներում:

ոստիկանության ավագ լեյտենանտ
Լիանա Խրշոյան

ՆՎԻՐՈՒՄ, ՈՐ ԴԱՐՁԱՎ ՀԱՎԱՏԱՄՔ

Ծաղկաշատ դաշտերով, վետվետուն ջրերով և գիշերային աստղաշաղախ երկնքով բնության գրկում ծնված մանկան գունառատ օրն սկսվում է արևի՝ աչքեր խտղտացնող ճառագայթների խաղով և ավարտվում հանդից տուն եկող ընտանի կենդանիների մայուն-բառաչով, ու այդ հեքիաթի մեջ ապրելով՝ թվում է՝ մանկությունն անվերջ է, կյանքը՝ հավերժական:Սակայն դպրոցի առաջին զանգը կտրում է մանկության հեքիաթից, և գիտելիքների աշխարհը դառնում է առաջնային ու կարևոր: Հաճախ էլ մանկության հուշերն ուղղորդում են մարդուն՝ նրան միշտ պահելով մի քիչ մանուկ: Ոմանք երազում են դառնալ օդաչու, ոմանք՝ բժիշկ կամ տնտեսագետ, իսկ այսօրվա իմ հերոսը դեռ մանկուց է երազել ոստիկանի մասնագիտության մասին: Ամեն ինչ սկսել է ռուսական մի դետեկտիվ ֆիլմից, որն անջնջելի հետք է թողել տակավին պատանի Վարդանի վրա (այսպես է իմ հերոսի անունը), ով այդ օրվանից անվերապահորեն որոշեց դպրոցը հաջողությամբ ավարտել, ստանալ մասնագիտական պատշաճ կրթություն և կյանքը կապել ոստիկանության հետ: Տարեկիցներից շատերը մինչև դպրոցն ավարտելը մի քանի անգամ փոխեցին իրենց որոշումները, բայց Վարդանը երբեք չերկմտեց ու մինչև վերջ մնաց հավատարիմ իր ընտրությանը:

2002թ. ավարտեց միջնակարգ դպրոցը և հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները՝ ընդունվեց ՀՀ ոստիկանության ակադեմիա: Այսօր էլ Վարդան Վարդանյանը լավ է հիշում իր երդման արարողությունը, հիշում է՝ ինչպիսի հպարտությամբ էր կանգնել շարքում, անգամ այսօրվա պես հիշում է հուզմունքից թրթռացող սիրտը, ոտքերի հաճելի դողը, առաջին համազգեստը... Երկու տարի ապրեց և սովորեց զորանոցային պայմաններում՝ մեկտեղելով միանգամից երկու շատ կարևոր բան՝ ուսումը և ծառայությունը: Դասից դուրս, երբ ազատ ժամանակ էր ունենում, հաճախ էր մտածում, թե որքան բան է փոխվել իր կյանքում, որքան շատ են ձեռքբերումները, ինչքան գիտելիքների պաշար ունի արդեն:

Հիասթափության պահեր, դժվարություններ ևս եղան, սակայն անկոտրում երիտասարդն ամուր էր կառչած երազանքների ոսկեթև արծվից, որը պետք է նրան պահեր բարձունքներում, որպեսզի երազանքները չսողային երկրի վրա, այլ թևավորված ճախրեին ու հավետ մնային ճախրանքների մեջ:

«Չեմ ասի՝ հեշտ էր երբեք տնից հեռու չապրած, ազատություն սիրող երիտասարդի համար, բայց հաստատակամորեն գնում էի երազանքներիս հետևից, ու դա ինձ հույս էր ներշնչում, ուժ էր տալիս՝ դիմակայելու ամեն տեսակի մարտահրավերների: Չէ՞ որ դժվարությունները կոփում և ձևավորում են իսկական տղամարդ, իսկ, ըստ իս, ոստիկանը տղամարդու մասնագիտություն է» ,- թեթևակի ժպտալով՝ ասում է իմ հերոսը: Նա խոսում էր, իսկ ես նկատում էի նրա աչքերի փայլը, որն ասես իր մեջ մի քիչ թախիծ, կարոտ ու ափսոսանք ուներ՝ լույսով շաղախված:

2007թ. ավարտեց ակադեմիան և հողի վրա ամուր կանգնած երիտասարդը մտավ մեծ կյանք՝ հավերժ հրաժեշտ տալով մանկության հուշերին ու պատանեկան խենթություններին՝ մնալով, սակայն, մի քիչ մանուկ, մի քիչ «խենթ»:

Վարդան Վարդանյանն աշխատանքային մկրտությունն ստացավ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնում, որտեղ նշանակվեց որպես քրեական հետախուզության բաժանմունքի օպերլիազոր, մեկ տարի հետո՝ նույն բաժանմունքի ավագ օպերլիազոր, իսկ 2013 թվականից՝ Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունքի պետ: Ծառայության ժամանակ ցուցաբերած անմնացորդ նվիրումի, բարձր կատարողականության, պահանջկոտության և կարգապահության արդյունքում երիտասարդ ոստիկանը 2016թ. նշանակվեց ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Կոտայքի բաժնի պետ: Նվիրյալ ոստիկանը հիշում է՝ երբ առաջին անգամ պետ նշանակվեց, ամբողջ գիշեր աչքերին քուն չեկավ, չկարողացավ ձերբազատվել իրար հաջորդող փոթորկուն մտքերից, բայց դա ուրախությունից չէր, այլ մեծ, շատ մեծ պատասխանատվությունից, մինչև վերջ շարքում մնալու և պատվով ծառայելու անհագուրդ ցանկությունից:

ՀՀ ոստիկանության պետի 2020թ. նոյեմբերի 9-ի հրամանով Վարդան Գևորգի Վարդանյանը նշանակվեց ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության պետի պաշտոնին: Մինչ այդ որտեղ ծառայել է Վարդանյանը՝ թե՛ Ավանի բաժանմունքում, թե՛ Մասիսի բաժնում, թե՛ Տավուշի մարզային վարչությունում, բարձր է պահել հայ ոստիկանի պատիվն ու արժանապատվությունը, ծառայել է՝ օրենքի տառին համապատասխան, արժանապատվությունը հավատամք դարձրած:

Տարիների վաստակ ունեցող ոստիկանը պարգևատրվել է ՀՀ ոստիկանության մեդալներով, կրծքանշաններով, սակայն իր բազմաթիվ պարգևների ու խրախուսանքների շարքում առավել շատ սիրեց ՀՀ ոստիկանության պետի կողմից որպես խրախուսանք տրված անվանական զենքը:

Իմ հերոսը չափազանց զուսպ է և՛ խոսքի, և՛ շարժուձևի մեջ, բայց մասնագիտության մասին խոսելիս աչքերը փայլում են մի առանձնահատուկ փայլով, որն էլ վայրկենական փոխանցվում է խոսակցին:

Ամուսնացած է, երկու զավակ ունի, սակայն ժամանակ չունի նրանց հետ զբաղվելու, յուրաքանչյուր պահ զգալու նրանց ապրեցնող ներկայությունը. ծառայությունն իր պահանջներն է թելադրում: Երբ հարցրի, թե կցանկանա՞ր իր զավակներին տեսնել ոստիկանի ուսադիրներով, մի քիչ հապաղելուց հետո ասաց. «Ինչպես քիչ առաջ ասացի, ոստիկանի մասնագիտությունը արական մասնագիտություն է, ուստի տղայիս դեպքում չեմ առարկի, իսկ դստերս հարցում կհամաձայնեմ միայն, եթե ինքը շատ ցանկանա»:

Իր մասնագիտությունը հարգող բարձրաստիճան ոստիկանին չէր կարող չհետաքրքրել հարազատ բուհը, նրա առաջնահերթությունները:

Բարձր գնահատելով ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դերն ու նշանակությունը նոր ոստիկանի կերպարի կերտման, գրագետ մասնագետներ պատրաստելու գործում՝ իմ հերոսը մեծապես կարևորեց սովորողների աշխատասիրությունը, նպատակասլացությունը, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը, հայոց լեզվին պատշաճ տիրապետելը և ինքնակրթվելու մեծ ձգտումը:

Վերջում ոստիկանության գնդապետը պատգամ հղեց սովորողներին՝ հիշեցնելով Կրթահամալիրի կարճ, բայց բովանդակալից կարգախոսը՝ ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ:

Ռ. Մուսաելյան
լեզուների ամբիոնի դասախոս

ՊԱՏԿԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նոր նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման1-ին կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Նաիրի Ջիլաբյանի հետ:



Գնացինք...

- Խոսենք Նաիրիից... Որպես խորագիր երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Սիրում եմ հայրենիքս, ծննդավայրս, ընկերասեր եմ և հավատարիմ: Փորձում եմ լինել առավելագույնս իրատես, ճշտապահ և աշխատասեր: Մարդկանց մեջ գնահատում եմ բարությունը, անկեղծությունն ու նպատակասլացությունը, տանել չեմ կարողանում սուտն ու դավաճանությունը:

- Նաիրի. մաքուր հայկական արմատներ ունեցող անուն. ի՞նչ է հայրենիքը քեզ համար:

- Ինձ համար հայրենիքն այն անգինն ու արժեքավորն է, ինչը պահպանելու համար ես ապրում եմ և ինչը պաշտպանելու համար կտայի կյանքս...

-Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Առանձին դրվագներ դժվարանում եմ մտաբերել, բայց կարող եմ ասել, որ ակտիվ ու հետաքրքրասեր երեխա էի, միշտ ձգտում էի բացահայտել ու սովորել նորը:

-Իսկ որո՞նք էին մանկությանդ տարիների խաղերը:

- Մանկությանս խաղերը բազմաթիվ և բազմազան էին, լի աշխուժությամբ ու չարաճճիություններով՝ բացառությամբ «շախմատային դիմակայությունները», որ միշտ ընթանում էր պապիկիս՝ իմ անհաղթելի մրցակցի դեմ:

-Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները:

- Դպրոցական տարիները բավականին հետաքրքիր և բացահայտումներով լի էին: Ունեցել եմ գերազանց առաջադիմություն, ակտիվ մասնակցել եմ դպրոցում կազմակերպվող միջոցառումներին ու մրցույթներին:

-Գիրք. ո՞ր գիրքն է, որ երկրորդ անգամ կընթերցես:

- Գիրքը մի չբացահայտված աշխարհ է, որն օգնում է քեզ բացահայտել աշխարհը... Ինձ համար չգերազանցված է Գ.Նարեկացու «Մտյան ողբերգության» պոեմը, որը ոչ թե երկրորդ անգամ, այլ միշտ կընթերցեի:

-Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Նախասիրություններից կառանձնացնեմ ընթերցանությունը, սպորտով զբաղվելը, ճանապարհորդելը, պատմություն և հոգեբանություն ուսումնասիրելը: Իսկ իրականությունից ես կտրվում եմ ընթերցանության շնորհիվ:

-Ինչի՞ մասին էիր երազում պատանեկության տարիներին:

- Երազանքներս բազմաթիվ էին, սակայն միշտ ձգտել եմ լինել ծնողներիս համար արժանի զավակ, հայրենիքիս՝ պիտանի մարդ և կլինեմ այդպիսին...

-Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Ունեմ նպատակներ, որն իրականացնելու համար հենց այս մասնագիտությունն անհրաժեշտություն է:

- Իրավաբանություն. երեք բառով նկարագրի՛ր՝ ինչ է քեզ համար այն:

- Անաչառություն, պատասխանատվություն, մարդասիրություն:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Չնայած իր դժվարություններին՝ ուսանողական կյանքը բավականին հետաքրքիր է ու շատ պատասխանատու, քանի որ Կրթահամալիրը տալիս է ձևավորվելու և ինքնադրսևորվելու լայն հնարավորություններ:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Որպես երկրորդ մասնագիտություն՝ ես կընտրեի հոգեբանի մասնագիտությունը:

-Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

- Խորհուրդ կտամ բարձր պատասխանատվությամբ մոտենալ իրենց ընտրությանը, ջանք ու եռանդ չխնայել ավելին սովորելու և պատրաստ լինել մասնագիտությունից բխող բարդություններին:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Ինքնակատարելագործման ձգտումը...

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Մարդկային արժեքներ և կարողություններ...

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

-Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Շնորհակալ եմ, Տե՛ր, բարի առավոտվա համար, թող օրս ևս լինի բարի:

- Օրդ սկսում ես ժամը...

- Ժամը 8:00:

- Սիրածդ աֆորիզմը:

- Նայի՛ր առաջ, գործի՛ր և նպատակդ դարձրու՛ իրականություն...

- Սիրելի զբաղմունքդ:

- Ընթերցանությունը:

- Արձա՞կ, թե՞ չափածո:

- Արձակ:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ապրել գիտակցաբար...

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

Գնահատի՛ր այն, ինչ ունես, և կլինես գնահատված...

Սիրելի՛ սովորողներ, ստորև Ձեզ ենք ներկայացնում Մայրենիի օրվա կապակցությամբ հայտարարված շարադրության մրցույթում հաղթած աշխատանքը:

Շնորհավորենք հեղինակին՝ Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի սովորող Սյուզաննա Սարուխանյանին, և ցանկանանք նորանոր հաջողություններ ուսման բնագավառում:

ՄԵՐ ՔԱՂՑՐԱԲԱՌ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Մրգաստանի մը նման կսիրեմ քեզ, հա՛յ լեզու...
Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու
Եվ կմնաս միշտ առույգ հին ավիշով կենսահորդ:

Վահան Թեքեյան

Մեր ժողովրդի դարավոր պատմությունը լավագույնս հաստատել է հայոց սրբությունների՝ հայրենիքի, մայրենի լեզվի և սրբություն սրբոց հավատի եռամիասնության պատվական և կենսահաստատ լինելը: Դարերի խորքից մշտաբուխ աղբյուրի պես հոսող հայոց լեզուն իր հետ բերում է մեր հեռավոր, շնորհաշատ ու իմաստուն նախնիների՝ գալիք սերունդներին ավանդած պատմամշակութային մի մեծ ժառանգություն:

Հայ բիբլիական ժողովուրդը հավերժանում է իր ազգային անանց արժեքներով, մայրենի լեզվով:

Աշխարհում գոյություն ունեցող շուրջ 2000 լեզուների շարքում մեր մայրենին իր փառահեղ տեղն ու դիրքն ունի: Այն աշխարհի ամենաճոխ լեզուներից է: Յուրաքանչյուր ժողովուրդ ճանաչվում է իր մայրենի լեզվով: Այն հայ ժողովրդի մեծագույն հարստությունն է:

Շատ բան է խլել մեզնից թշնամին՝ բարդելով վերքին վերք ու անարգանք, կտրել է նաև արմատից լեզուն, բայց նա հառնել է փյունիկի նման ու դարձել դարերի պատմության խոսուն վկան:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի շնորհիվ թարգմանված Աստվածաշունչը փառահեղ թարգմանություն է, որն իր լեզվական շքեղությամբ, ամեն մի խոսքի ու բառի անխաթար մոտեցմամբ իրավամբ համարվում է թարգմանությունների «թագուհի»:

Հայոց լեզուն հայապահպանության գլխավոր զենքն է, մեր գոյության հիմնասյունը, ազգային միաբանության կարևոր առհավատչյան, համազգային, համապետական արժեք, ուստի նրա նկատմամբ անհրաժեշտ է հատուկ հոգացողություն, որը պետք է արտահայտվի բոլորիս ջանքերի արդյունավետ ու շահագրգիռ համադրմամբ:

Այսօր մեր երիտասարդության մեծ մասն ունի մի մեծ թերություն՝ հայերեն բառերը գրել լատինատառ՝ ուշադրություն չդարձնելով ուղղագրությանը, կետադրությանը, բառակազմությանը: Սահուն նախադասություն գրելիս անհնչյուն մտքում, աղավաղելով մեր գեղեցիկ հայերենը, անհնարին է դառնում զգացմունքայնության արտահայտումը, իսկ գեղեցիկ մտքի զգացմունքային արտահայտումը հնարավոր է միայն մեր ոսկեղենիկ հայերենով՝ հայատառ գրելու միջոցով:

Վաստակածի իրավունքով տեր լինենք մեզ վերապահված ժառանգություններին և նվիրյալ ծառայությամբ լծվենք այդ վեհ գործին: Մայրենիի անաղարտության պահպանումը յուրաքանչյուրիս սուրբ գործն է: Իսկ լեզուն պահպանվում է գործածելով: Պետք է մտածենք, խոսենք, գրենք, կարդանք, երգենք մաքուր հայերենով, չխառնենք մեր գեղեցիկ լեզվին օտար բառեր, քանի որ հայերիս համար հայ մնալու առաջին գրավականը հայերենն է:

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը շուրջ մեկ տարի Սուրբ Ղազար կղզում՝ Մխիթարյան միաբանությունում, սովորեց մեր առաջին գրոց լեզուն՝ գրաբարը, և այն անվանեց աղոթքի լեզու: Այն իր երգեցիկ շարականներով մինչ օրս հնչում է Սուրբ տաճարներում:

Կոչ եմ անում՝ լինենք արժանի ժառանգորդը մեր աղոթքի լեզվին, միահամուռ, հավաքական ուժով պահպանենք մեր լեզուն՝ մեր ամենաթանկ գանձը, հավատարիմ մնանք մեր ազգային արժեքներին, խոսենք գեղեցիկ ու անաղարտ հայերենով, օգտագործենք միջազգային եզրույթների և այլալեզու բառերի հայերեն համարժեքները, հնչեցնենք անապական ոսկեղենիկը, քանզի ‹‹Հայոց լեզուն տունն է հայու››:

ՀԵՏԱՔՐՔԻՐ է

Կապիտան բառը հայերենում եվրոպական փոխառություն է՝ ռուսերենի միջնորդությամբ, որը նշանակում է զորահրամանատար, այսինքն՝ զինվորական միավորի գլխավորը: Իսկ այժմ իմաստի նեղացմամբ՝ զինվորական համապատասխան աստիճանը:

Յուրաքանչյուր դպրոցական նույնիսկ գիտի, որ կապիտանից աստիճանով անմիջապես բարձր կոչումը մայորն է: Այս բառը ևս նույն ճանապարհով է մուտք գործել հայերենի մեջ: Լատիներեն այն նշանակում է մեծ, ավագ:

Կիլիկյան հայկական թագավորության շրջանում (1080-1375թթ.) մեր նախնիներն ունեին բանակի սպառազինման և մատակարարման գծով հրամանատարի պաշտոն, որ անվանում էին մարաջախտ, որն արևմտահայերենում նույնությամբ օգտագործում են, ինչպես՝ մարաջախտ Բաղրամյան: Այն փոխառված է ֆրանսերենից, որն էլ ստուգաբանորեն նշանակում է ձիու ծառա:

Ժամանակակից հայերենի մարշալ բառը ուրիշ բան չէ, քան նույն բառի կրկնակի փոխառությունը՝ այս անգամ ռուսերենի միջնորդությամբ: Ուրեմն մարաջախտ կամ մարշալ բառը ստուգաբանորեն նշանակում է ձիու ծառա:

ԼՈՒԾԵՆՔ ԽԱՉԲԱՌԸ



1. Սկզբունք, որով վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:
2. Իրենց լիազորություններն իրականացնելու համար միմյանց աջակցություն ցուցաբերելու վարչական մարմինների պարտականությունը:
3. Վարչական ակտի տեսակ, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:
4. Գրավոր ձևի վարչական ակտի տարատեսակ:
5. Գործողության անվանումը այն դեպքում, եթե որևէ գործողություն կատարելու վերաբերյալ վարչական ակտով նախատեսված պարտականությունը պարտավոր անձը չի կատարում, բայց դրա կատարումը հնարավոր է մեկ այլ անձի կողմից, ապա կատարողական մարմինը կարող է վերջինիս հանձնարարել կատարելու այդ գործողությունը պարտավոր անձի հաշվին:
6. Օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելը, որը չի պատճառել էական վնաս անձանց իրավունքներին կամ օրինական շահերին կամ խոշոր վնաս՝ պետական կամ հասարակական շահերին:
7. Համապատասխան օրենսգրքով սահմանված հոդվածի անվանում, որով սահմանվում է, որ կոնկրետ «օրենքի» ընդունմամբ վարչական իրավախախտում կատարած անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել վարչական պատասխանատվությունից, իսկ վարչական տույժի ենթարկված անձը կարող է լրիվ կամ մասնակիորեն ազատվել ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ վարչական տույժից:

Սիրելի՛ սովորողներ, խաչբառի պատասխանները կարող եք ներկայացնել վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոն:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ՀԱՅԻ ՍԻՐՏԸ

Տե՛ս, ոտնակոխ իմ սիրտն ահա՝
Շղթայակապ, լացող ու լլկված,
Անցել է նա մի մեծ ճամփա՝
Ոսոխներին հաղթանակած:

Իմ սիրտը խոցել են, փորձել են այրել ,
Իսկ ցեղն իմ համառ՝ ջարդել, ավիրել,
Սակայն սիրտն իմ երբեք չի պարտվել,
Ինչքան էլ վառել, բայց չի մոխրացել:

Տեսել է մեծ ջարդ, տառապած աչքեր,
Արյամբ ծովացած դաշտեր ու հանդեր,
Որդու գալուստին սպասող մայրեր,
Թաքուն ողբացող դեռատի հարսներ:

Բայց ազգս համառ է, ապրել է, կապրի,
Չի դառնա երբեք ոսոխին գերի,
Քանզի զավակն է դյուցազուն Հայկի,
Ամեն ոք գիտի ուժը մեր բազկի...

Սիրտս այրվում է, բայց չի մոխրանում.
Դարավոր ազգիս փարոսն է դառնում:
Տե՛ս, խոցված սիրտս հուսավառ ահա
Բռնել է ուզում նոր փառքի ճամփա:

Մարո Խիզանաշվիլի
Ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն նման է սգավոր մի մոր,
Լացում է ամեն բառի կարոտից,
Սակայն չի մեռնում, փյունիկ է դառնում,
Որքան էլ ընկնի, միշտ վեր է հառնում:
Լեզուն նման է աղետի հզոր,
Նրա հանդեմ անգամ մահն է անզոր,
Նրան չի հաղթում ո՛չ սուր, ո՛չ էլ հուր,
Զինվորներ ունի՝ քաջ, ազնիվ ու բյուր:
Մեր լեզուն Դավթի բերնով է խոսել,
Մայր Արաքսի հետ ծնվել է, հոսել,
Մեր լեզուն դարձել է մշտավառ փարոս,
Նրանով է խոսել ամեն մի հերոս:
Լեզուն է ծնել իրավունք և ուժ,
Նա է տարածում ավետիս ու գույժ,
Նրանով ենք մենք ապրել, արարել,
Այսպիսի հրաշք հայրենիք կերտել,
Նրանով ենք մենք Մասիսը ելել
Ու վեհ գագաթին դրոշ ծածանել:

Մելսիդա Ավետիսյան
Ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Զանգակ» հրատարակչության տպարանում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 16. 03. 2022թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան: